զանուն գերապատիւ Մկրտիչ Արքեպիսկոպոսի ցուցանել յօրագիրս բացակայ ցվերադարձն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.

Գերմանական մի լրագրում դպրոցների և աշակերտների յետագայ վիճակագրական տեղեկութիւններ հրատարակված էին, համեմատելով նոցա թիւը զանազան եվրոպական տէրութիւնների բնակիչների հետ։ Գերմանիայում 42 միլիոն բնակիչներ կան, 60 հազար դպրոցներ և 6 միլիոն աշակերտներ։ Ուրեմն միջին թուով իւրաքանչիւր դպրոցին 100 աշակերտ կընկնէ։ Դպրոցների վերայ իւրաքանչիւր բնակիչը կծախսէ 80 կոպէկ։ Անգլիայում 34 միլիոն բնակիչներ կան, 58 հազար դպրոցներ և 3 միլիոն աշակերտներ,—ուրեմն 52 աշակերտ կընկնէ իւրաքանչիւր դպրոցին և իւրաքանչիւր բնակչին 50 կոպ. ծախս։ Ավստրիայում 37 միլիոն բնակիչներ կան, 30 հազար դպրոցներ և 3 միլիոն աշակերտներ—ուստի 104 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 45 կոպէկ ծախս։ Ֆրանսիայում 37 միլիոն բնակիչներ կան, 71 հազար դպրոցներ և 4 միլիոն 700 հազար աշակերտներ,—ուրեմն 66 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 40 կոպ. ծախս։ Իսպանիայում 17 միլիոն բնակիչների համար կան 29 հազար դպրոցներ, 1 միլիոն 600հազար աշակերտներ,—56 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 36 կոպ. ծախս։ Իտալիայում 28 միլիոն բնակիչների համար կան 47 հազար դպրոցներ և 1 միլիոն 200 հազար աշակերտներ,—40 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին 22 կոպ. ծախս կընկնէ։ Ռուսիայում 84 միլիոն բնակիչների համար կան 32 հազար դպրոցներ և 1 միլիոն աշակերտներ,—36 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 7½ կոպ. ծախս։

Մեր թեմական վերատեսուչների հաշիւներից, որ պարտաւոր են նոքա ամենքը շուտ ներկայացնել Սինոդին, մենք կարող ենք, յետագայ ամսատետրակներում հրատարակելով, մակաբերել թէ ինչ յարաբերութիւն կայ Հայերի թուի, նոցա ունեցած դպրոցների և իւրաքանչիւրին հասնող ծախսի մէջ։

Պէտերբուրգի Մարդասիրական ընկերութիւնը իւր բարեգործական գումարներից օգոստոս ամսում ծախսել է զանազան բարեգործական ձեռնարկութիւնների և գործերի վերայ 23,884 մանեթ 25 կոպ։

Ռուսիայում կան 4 լավրա (միտրոպոլիտների անմիջական տնօրէնութեան ներքոյ գտնվող վանքեր), 7 ստավրոպիգիական վանք (սինոդի անմիջական տնօրէնութեան ներքոյ գտնվող), 193 արական վանք եւ 96 իգական վանք,—բոլորը 305 վանք, որոնց պահպանութեան համար, բացի նոյն ինքն վանքերի ահագին եկամուտներից, արքունի գանձարանը կվճարէ տարեկան 430,000 մանեթ, և արական վանքերն աւելի կծախսեն համեմատաբար քան թէ իգական վանքերը։